ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՆՔԱՇԵՆԸ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայ մշակույթի հուշարձաններով Բուն Աղվանք երկրամասում առանձնապես հարուստ է Շամախու Գարդման գավառի Վանք կամ Վանքաշեն գյուղը: Այն գտնվում է Կոկիսոն (Գյոկչայ) գետի ձախ կողմում, բարձրադիր սարահարթի ծայրում, ձորագլխին, գետափից շուրջ 5 կմ արևելք (այժմ Ադրբեջանական ԽՍՀ, Իսմայիլի շրջան): Գյուղի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չեն պահպանվել: Վանքաշենը 1850-ական թվականներին, Ս. Ջալալյանցի այցելության ժամանակ, ուներ 60 տուն հայ բնակչություն[1]: 1861 թվականին այն կազմել է 140 տուն[2], իսկ 1890 թվականի մարդահամարի տվյալներով Վանքաշենի բնակչությունը ավելացել էր մինչև 182 տուն (1015 մարդ)[3]:

Վանքաշենը հարուստ է պատմական հուշարձաններով: Գյուղի հին թաղամասում, որը տարածվում էր տեղանքի ամենաբարձր մասում, նկատվում են տեղացիր հեղինակների կողմից հիշատակված Սբ. Հովհաննես եկեղեցու հիմքերը: Եկեղեցու վերաբերյալ ամենավաղ հիշատակությունը պատկանում է Ս. Ջալալյանցին, որը նշում է. «Ունին զսագաշէն եկեղեցի ի նոյն ձորափան ի վայելուչ վայրի»[4]: Դանիել արքեպիսկոպոսը նշում է, որ «Եկեղեցին կառուցված է կամարակապ, վանքաձև...»[5]: Համեմատաբար հանգամանորեն է նկարագրում եկեղեցին Մ. Բարխուդարյանցը. «...եկեղեցին Ս. Յովհաննէս Մկրտիչ, կամարակապ 4 սեանց վերայ, որ կրում է հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է Սուրբ Յովհաննէս եկեղեցիս Տէր Աբրահամին, որ է որդի Գրիգորին, թվ. ՌՄՀԵ. Ղաբալայ»[6]: Նկարագրություններից ու վիմագրից պարզվում է, որ եկեղեցին կառուցվել է 1826 թվականին և ունեցել է թաղածածկ եռանավ բազիլիկի հորինվածք:

Գյուղի հյուսիսային ծայրում տարածվում է գերեզմանոցը, ուր պահպանվել են 18—

---

[1] **Ս. Ջալալեանց,** Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Բ. Տիֆլիս 1858, էջ 389:

[2] **Մ. Սմբատեան,** Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ բաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախոյ թեմի, Տիֆլիս 1896, էջ 139:

[3] Նշվ. աշխ., նույն տեղում:

[4] **Ս. Ջալալեանց,** նշվ. աշխ., էջ 389:

[5] **Դանիել արքեպիսկոպոս,** Այցելութիւն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախոյ, Արարատ 1870, էջ 320:

[6] **Մ. Բարխուդարեանց,** Արուանից երկիր և դրացիք, Թիֆլիս 1893, էջ 203:

20-րդ դարերի արձանագիր տապանաքարեր (ավելի հները անարձանագիր են):

Գերեզմանոցում, որը մասամբ ծածկվել է մացառուտներով, պահպանվել է նաև մեկ խոյաձև տապանաքար: Վերջինիս գլխի մասը ջարդված է: Մ. Բարխուտարյանցը հնավայրից հրատարակել է միայն մեկ տապանագիր՝ 1717 թվագրությամբ:

ԹՎԻՆ ՌՃԿԶ ԷՐ: ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԷԼԻՍԻՆ ՈՐ Է ՈՐԴԻ ՄԷԼԻՔԵԱՆ, ԵՂԲԱՅՐ ՕՀԱՆԻՆ, ՄՕՐՆ ՆՈՐԱ ՄԱՐԵԱՄԻՆ: ՄԱՀՆ ՈՐ ԵԿԱԻ ՎԱՆՔՆ, ԵՍՐԱՆՔՍ ԿԱՊԱԾ, ՄԵՌԱՅ, ՈՐ ՔԱՀԱՆԱՅ, ՈՐ ԿԱՐԴԱՅ, ՀՈԳՈՅ ԱՍԻ: ԼԱԿԶԻՆ, ՈՐ ՎԵՐ ԿԱՅԱԻ, ՔՈՌ ԷԼԱԻ[7]:

[7] Նշվ. աշխ., էջ 206:

Ինչպես երևում է վիմագրի բովանդակությունից, այն ունի տեղական բարբառային, լեզվա-ոճական առանձնահատկություններ: Բարեբախտաբար տապանաքարը կորած չէ, իսկ վիմագիրը ընթեռնելի է ամբողջությամբ:



Հին Վանքաշենի գերեզմանոցի խաչքարերը
ա) խաչքար 1491 թ., բ) խաչքար 1410 թ., գ) խաչքար 1403 թ., դ) խաչքար XIV—XV դ.

Տեղում մեր կողմից կատարված վիմագրի վերծանությունը հետևյալն է:

ԹՎ(Ի)Ն ՌՃԿԶ ԷՐ (1717): ԱՅՍ Է ՏԱ(ՊԱ)Ն ՄԷԼՍԻՍԻ, ՈՐ Է ՈՐԴԻ ՄԷԼՔԻՍԷՆ ԵՂԲԱՒՐ ՕՀԱՆԻՆ, ՄՕՐՆ ՆՈՐԱՅ ՄԱՐԵԱՆՆԵ: ԱՀՆ ՈՐ ԵԿԱԻ ՎԱ(Ն)ՔՆ ԵՍՐԱՔՍ ԿԱՊԱԾ ՄԵՌԱՅ, ՈՐ ՔԱՅԱՆԱՅ ՈՐ ԿԱՐԴԱՅ ՀՈԳՈՅ ԱՍԻ:

Մյուս երեսին:

ԼԱԿԶԻՆ, ՈՐ ՎԵՐ ԿԱՅԱՒ ՔՕՌ ԵԼԱՒ:
Սրան մոտ մեկ այլ տապանաքարի վրա մի կերպ կարդացվում է.
...ՏԱՊԱՆ ՅԱՐՈՒԹԻ, ՈՐ Է ՈՐԴԻ Տ-
...(ՈՂՈՐՄԻ) ԱՍԻ, ԹՎ(Ի)Ն ՌՃԿԷ (1718):

Խաչքար հին Վանքաշենի գերեզմանոցից

Երկու տապանաքարերում էլ տառերը փորագրված են խոշոր-խոշոր և խորը ձևով: Գերեզմանոցում մեծ թիվ են կազմում 19-րդ դարի տապանաքարերը, որոնք մեծ արժեք են ներկայացնում գյուղի ուշ շրջանի պատմության ամբողջական ուսումնասիրության առումով: Դրանցում թերևս ուշագրավ են երկու բարձրաստիճան գինվորականների տապանագրերը, որոնք ներկայացնում ենք ստորև: Առաջինը ունի ութ տող արձանագրություն, իսկ տապանաքարը խիստ մեծ չափեր:

ԱՅՍ Է ՏԱՄԲԱՐԱՆ ՊԵՏՐՈՍ ԻՇԽԱՆԻՆ ՔԱՋԱԲԱՆ ՈՐԴԻՈՑ ԻԻՋԲԱՇԵԱՆ ՏՈՀՄԻՆ ՈՎԵԼԻՑ ՋԱՒԱԿ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՊՍԱԿԵԱԼ ՅԱՐՔԱՅԷՆ ԱՍՊԵՏԻՒ ԽԱՋԻՆ, ՈՐՈՑ ՔԱՋ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿ ԲԱՐԻՆ Ի ՍԷՐՏՍ ՀԱՅԿԱՋԱՆՑ ԱՆՄՈՌԱՑ ՊԱՀԻՆ, Վ(Ա)ԽՃԱՆԵԱԼ ԾԵՐՈՒՆԱՋԱՐԴ ՀԱՍԱ-
ԿԻՆ
Ի 13 ՍԵՊԴԵՄԲԵՐԻ 1859 ԹՈՒԱԿԱՆԻՆ:

Մյուսի վրա երեք տող:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԿԱՒԱԼԵՐ ՌՈՒՍՏԱՄԻՆ ՄԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍԻՆ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ. ՎԱԽՃ. 1860 ԱՄԻ:

Գյուղի հյուսիս-արևմտյան կողմում պահպանվել են հին գյուղատեղի, ավերակ եկեղեցի և գերեզմանոց: Սրանք հայտնի են «Ավերակ վանք» անվամբ: Հնավայրի մասին Ս. Ջալալյանցը հաղորդում է. «Ի ստորև գեղջս յեկր գետոյ ի մացառուտ անտառի է աւերակ մեծի Վանաց, ըստ աւանդութեանց գեղի միաբանից և առաջնորդի այնր վիճակի, իսկ այժմ բեկորք հիմանց հապիւ երևին: Ըստ պատմելոյ բնակչաց գիւղս այս էր սեպհական կայուած նոյն վանից, ուստի և կոչի Վանքի շեն»[8]:

Ընդարձակ գերեզմանոցում դեռևս պահպանվում են բազմաթիվ խաչքարեր ու տապանաքարեր (թվագրված 14—16 դդ.), այդ թվում նաև արձանագիրները: Ցայսօր հնավայրը չի ենթարկվել մասնագիտական լուրջ ուսումնասիրության: Տեղագիր հեղինակներից էլ միայն Մ. Բարխուտարյանցն է, որն անձամբ եղել է գերեզմանոցում և արտագրել թվով վեց տապանագիր: Մեր այցելության ընթացքում գերեզմանոցում գտանք յոթ արձանագիր խաչքարեր, որոնցից երկուսի վիմագրերը անցյալում հրատարակել է Մ. Բարխուտարյանցը, բայց որոշ տարբերություններով: Հաշվի առնելով վիմագրերում հիշատակված որոշ անծանոթ անձնանունների առկայությունը, հարկ համարեցինք նախ անփոփոխ վերահրատարակել Բարխուտարյանցի ընդօրինակածները և հետո մեր: Կարծում ենք, որ դրանց համադրումը կարելի կլինի պատկերացում կազմել վիմագրերի լեզվա-ոճական, ազգագրական առանձնահատկությունների վերաբերյալ:

1. ԹՎԱԿԱՆ Ծ. (փրկչ. 601):
2. ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՅ ՔԱՄԱԼ:
3. ԸՍՊԸՆԴԻՍԱՐ ՄԼՔԴԱՐ (կալվածատեր), ՎԱԹԱՆԴ ԱՐ (էր) ԿԱՐՄՐԱԳԵԼ, ՄԱՋԱՐԱՅ ՈՐԴԻ, ԱԾ ՈՂՈՐՄԻ...:
4. ԹՎ. Կ:
5. ԵՍ ԳԻԳՐ ՈՒԼՈՒԲԷԿԱՅ ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁԽԱՋՍ ԳԻԳԵՐԻ, ԱԾ ՈՂՈՐՄԻ ԹՎ. ՉՃԽԸ. ԷՐ:
6. ԹՎ. ՊԾԲ[9]:

---

[8] **Ս. Ջալալեանց**, նշվ. աշխ., նույն տեղում:

[9] Բոլոր վեց վիմագրերն էլ տես՝ **Մ. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 204:

Ներկայումս գերեզմանոցում պահպանվել են հետևյալ վիմագրերը:

1. Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐ(Մ)Ի ԵՐԴԱՅՁԵՐԻ:Ի:Թ:Վ.Չ.Ճ.Ծ.Թ. (1410):
(խաչքարի չափերն են 70 սմ բարձր., 65 սմ լայն.):
2. Ի ԹՎ ՉԽ (1491) Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԱԾ ՈՂՈՐՄԱ Ե...ԻՆ:
(չափերն են 112 սմ բարձր., 73 սմ լայն.):
3. ԹՎ ՊԺԵ (1366): Չափերն են 39 սմ բարձր. (մասամբ խրված է հողի մեջ) 52 սմ լայն.:
4. (Շ(ԱՔ)Ա)Ր, ԸՍՏԻ Ի ԹՃԱՇԽՑ (անհասկանալի—Ս. Կ.), Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՒ ՇԱՔԱՐԻՆ, ԲԱՆԴԻՉԱՅ ՆՈՐԱՅ ՔԱՄ: Չափերն են 80 սմ բարձր., 72 սմ լայն.,
5. ԱՅ... ԼԱ...ԻՍ: Չափերն են 140 սմ բարձր., 63 սմ լայն., (նկ. 3):
6. ԵՍ ԳԻԳՈՉ ՈՒ ԲԵԿԱՅ ԿԱ(Ն)ԳՆԵՑԱՔ ՉԽԱՉՍ ԳԻԳԵՐԻ. ԹՎ(Ի)Ս ՉՃԽԸ ԵՐ (1399), ՈՂՈՐՄԻ Ա(ՍՏՈՒԱ)Ծ: Չափերն են 103 սմ բարձր., 77 սմ լայն.:
7. Ի ԹՎ(ԻՆ) ՊԾԲ (1403): Չափերն են 70 սմ բարձր., 60 սմ լայն., (նկ. 2, գ):
8. ԹՎ(ԻՆ) ՉՂԵ (1546):

Ոճական ու գեղարվեստական առումով գերեզմանատանը պահպանված խաչքարերը ինքնատիպ են որպես խոսք խաչքարային արվեստում: Դրանցում հորինվածքային հատկանշական առանձնահատկություններն են՝ ա. հիմնականում խաչքարերի վերնամասն ավարտվում է վրանաձև (երկթեք), բ. հորինվածքի կենտրոնում քանդակված հիմնախաչը մեծ մասամբ հավասարաթև է ու ներփակված շրջանագծի մեջ:

Հին կամ ավերակ Վանքաշենի գերեզմանոցից բացի, գյուղի տարածքում կան նաև այլ գերեզմանոցներ, ինչպես Ղլըլ-ղայա (կարմիր քերծ)՝ գյուղից հարավ-արևմուտք, Շաքուլի (Շաքուլու)՝ գյուղից հյուսիս և այլն: Վերջին հնավայրից Մ. Բարխուտարյանցն արտագրել է երեք տապանագիր, որոնք ևս վերահրատարակում ենք անփոփոխ[10]:

1. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԸՌԸՆԴՈՒԽԻՆ, ՓՈԽԵՑԱԻ Ի ՔՍ Ի ԹՎ. ՊԾԷ (1408):
2. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱԼԱՀԴԱՏԻՆ ԹՎ. ՉԽԲ (1493):
3. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԽՈՆԴՇԱՅԻՆ Ի ԹՎ. ՊԾԸ (1409):

Մեր այցելության ժամանակ տեղում գտնված միայն երկու արձանագիր տապանաքարեր, որոնցից մեկը (№ 3) անսխալ ընթերցել ու հրատարակել էր Մ. Բարխուտարյանցը, իսկ մյուսը հրատարակում ենք առաջին անգամ:

Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ԱՍԻ ..ՇԻՆ:

Վանքաշեն գյուղի շրջակայքում կան նաև այլ պատմական հուշարձաններ, ինչպես՝ «Նահատակ»[11] կոչված սրբատեղն ու հին քաղաքատեղ. «...Ջիւանշիրապատ՝ Վանքաշէն և Ամրվան գիւղերի հանդէպ Գեօքչայ գետի եզերքումն՝ լեռների ստորոտի տափարակումն Ջիւանշիր իշխանի հիմնածն»[12]: Վերջիններս կարոտ են ուսումնասիրության[13]:

---

[10] Նշվ. աշխ., էջ 205:

[11] Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 185:

[12] Նշվ. աշխ., էջ 194:

[13] Տեղում կատարած աշխատանքներին մեզ ցույց տրված օգնության համար շնորհակալություն ենք հայտնում Վանք գյուղի բնակիչներ հայր ու որդի Աշոտ և Իշխան Հակոբյաններին: